Յանքը պիտի սկսել այն ժամանակ, յերբ անցել եւ գարնան ցրտահարության վտանգը: Անալիզի յենթարկելով տարրեր շըրթաների ողերեւոթարանական տվյալները, 1922-28 թ. ներտայալ գալիս ենք այն յեղակացության, վոր մեր տարրեր շըրթաներում ցանքը պիտի կատարել սկսած ապրիլի 20-ից մինչև հունիսի 10-ը. վեղիի շրջանում ցանքը պիտի վերջացնել մայիսի 5-ին. առաջանի աշխատանքները պիտի սկսել ապրիլի 25-ից և վերջացնել մայիսի 15-ին:

Գարնան ցրտերը վորեւել շրջանում ամեն տարի ճիշտ միեւնույն ժամանակներում չեն անցնում, սակայն խոշոր տարրերություններ այդ տարիների միջև չեն լինում, ուստի ցանքի ժամանակի նկատմամբ բերած թվերը կարող են փոփոխության յենթարկվել չնշն չափով:

Սերմերի ծլելու ժամանակի տեսակետից վորոշող նշանակություն ունի հողի ջերմությունը. վորմերը ցույց են տվել, վորյերը ցանքը կատարվում է շատ վաղ (մարտի վերջերին կամ ապրիլի սկզբին), ապա սերմերն ընկնելով ցուրտ և խոնավ հողի մեջ,

Աղյուսակ № 5

Տ. Տ.	Յանքը կատարվել է	100 բնից բանիսի մեջ բույսի յիշերի բոլորումը
1	10 ապրիլ	45
2	20	10
3	30	2
4	10 մայիս	5
5	20	2
6	30	1

այնքան ժամանակ չեն ծլում, մինչեւ վոր հողի ջերմությունը 13-14 տառինախից 0-ով չի անցնում: Սերմերը յերկար ժամանակ մնալով սառը հողում (15-25 որ) ալիք են թռոյլ, զեղին և նույնիուն դորշագույն շաքելներ: Պարզ է, վոր նման ծիլերը հե-

տագայում ավելի շատ և ուժեղ կենթարկվեն Հիվանդությունների և միջամտների ազգեցության, քան թե նորմալ ծիլերը: Բացի դրանից, սառը և խոնաց հոգեբուժմ յերկար մնացած սերմերի խոչըր մասը կարող է բարորովին չձյել և հոռել, վորի հետամնացով կամ կորականի ցանքերի տարածությունը, կամ մենք ստիպված կլինինք ուշացած կրկնացան կատարելու:

Թե վորքան մեծ և ցանքի ազգեցությունը ծլող սերմերի վրա, ցույց են տալիս թուրքեատանի սելեկցիան կայանում զրված հետեւյալ փորձերը՝ (անս № 5 աղյուսակը):

Այսպիսով շատ վաղ (աղրիլի 20-ից առաջ) ցանքը վճէ մի դեպքում թույլատրելի չե: Ժամանակին, այսինքն՝ սկսած աղրիլի 20-ից մինչեւ մայիսի առաջին դեկտը ցանված սերմերը ծլում են 5-8-րդ որը. ծիլերը յերեվում են միահազարար, լինում են առաջ, մուգ կանաչ գույնի և հեշտությամբ ել դիմովրում են միջամտներին ու հիվանդություններին: Այս դեպքում կարելի յե նաև քիչ սերմ ցանել՝ 45-50 կիլո, վարովհետեւ նրանք համարյա բուրդն ել ծլում են (յեթև ունեն բարձր ծլունակություն), և վախենալ, վոր նրանց վորոշ մասը կհռափ և չի ծլի՛ հիմք չկա: Ժամանակին և վաղ ցանված սերմերի ծիլերը յերեվում են համարյա միաժամանակ այն տարրերությամբ միայն, վոր առաջին դեղքում նրանք լինում են առաջ, իսկ 2-րդ դեղքում՝ թույլ այդ բանը ցույց տալու համար բերում ենք Տաղքենդում զրված փորձերի արդյունքները:

Աղյուսակ № 6

Ա. №	Ցանքի ժամանակը	Ելեկը յերեւում ժամանակը
1	10 ապրիլ	2 մայիս
2	20	3
3	30	7
4	10 մայիս	29
5	20	3
6	30	3 հունիս

Քվերը ցույց են տալիս, վոր մայիսի 2-րդ կիսում (այսինքն ուշացրած) կատարած ցանքերը 3-5-րդ օրը արդեն ծիլեր են առիս, վարովհետեւ այդ ժամանակ հողը լինում և տաքացան, ծիլերը յերեվում են միասին և լինում են առաջ:

Սակայն, վորքան ել ծիլերի դրությունը լավ և լինում, բայց
և ախորես ուշ արած ցանքը չի տալիս այն արդյունքը, ինչ ար-
դյունք ստացվում և ժամանակին արված ցանքից, վորովհետեւ,
վորքան բամբակը ուշ և ցանքում, այնքան ել զարգացման հա-
ժար քիչ ժամանակ և մեռմ մինչև աշնան ցրտերը:

Բերդած թվերը ցույց են տալիս նաև այն, վոր ժամանակին
արված և ուշ կատարված ցանքերի ծիլերի յերեղալու միջնի մոտ
մեկ ամիս առարկերություն կատ, այսինքն՝ բամբակի վեղետացիան
կրնառուած և մեկ ամսով:

Հե՛ջու և, դրա հետեւանքով անդի յեն ունենում բամբակի
տառանձնի վեղետացիան շրջանների վորոշ կրճատում, սակայն ընդ-
հանուր առաջամր ուշ արված ցանքը չի կարողանում հանել ժա-
մանակին արված ցանքն և անդի յեն ունենում բերքի անկում:
Աւրեմն յիթե մենք ուզում ենք ունենալ նորմալ բերք, չպիտի
խարիզմա ուշ արած ցանքերի ծիլերի առողջ տեսքից, այլ պիտի և
երրանենք բարոր միջոցները՝ ցանքը ժամանակին սկսելու և ժա-
մանակին ևլ վերջացնելու: Համար: Ժամանակին արած ցանքը
տառանձնառու մեծ նշանակություն ունի ծանր կավային հողերում:
Յերբ վարեն պատճառով ցանքը ուշացնել և, տպա պիտի ցանել
միայն վաղահատ սորտի սերմեր: Վաղահատ բամբակի պիտի մշա-
կել նաև ուշ առքացող, ծանր կավային հողերում:

Այն դեպքերում, յերբ ցանքից առաջ սերմերը թրջում են,
տպա այդ դործությունը պիտի կատարել 30-40 ժամ ցանքից
տառաջ՝ հոսող ջրի մեջ: Յերբ սերմերը, նման ողերացիայի դեպ-
քում, ուշանում են և տալիս են 2-3 միլիմետրից ավելի յերկար
ծիլեր, առա կատեղորիկ կերպով պիտի և արգելել նման սերմերը
ցանելը:

Երջանի մասշտարով առաջին հերթին ցանքը ողիաի խիսել
հեշտ առքացող հողերից և կամաց-կամաց անցնել ծանր հողերին:

Մեկ հեկտարին ցանել 55 կիլո: Ցանքի խորությունը, զարնան
արաթ կատարելու դեպքում, պիտի լինի 4-5 սմ., աշնան արաթի
դեպքում՝ 5-6 սմ.: Առարկանիւմ պիտի դեպքում՝ 3-4 սմ.: Վաղ ցանք
կատարելու դեպքում սերմերը ցանել ավելի «սաղր» (յերեսանց),
ուշ ցանելու դեպքում խոր, ծանր հողերում յերեսանց, թեթև
հողերում՝ խոր:

Սերմացուն պիտի ունենա բարձր սորտային մաքրություն,

սպասված չոր պայմաններում, ունենալ թարժ և տուղջ տեսք, արտօյուտ բարձր կշիռ և ծրագրակություն (85%-ից վեց պահան)։

Բացի դրանից, սերմացույին պիտի հասկացնել այն հեղափորի աերմերը, վորը հավաքված և մինչեւ աշխան ցրաւհարությունը։ Հետախաներից հետո հավաքված բերքի սերմերը իրեւ սերմացու գործադրել էի կարելի։

Նախքան ցանքը անհրաժեշտ և սերմացուն ստուգել, մաքրել կեղափաց, չմշակված, խակ և տվյալ սորտին վոչ տիպիկ սերմերից։

Ամբողջ ցանքը կատարել շարքացաններով հետեւյուլ միջարքային տարածությունները թազնելով։

Նավրոցիու և մնացած սորտերի համար 60—70 ստուգիմեր։ Մամր և հարաւաս հազերում, ուր բույսերն ուժեղ ևն տնում, այդ նորմաները կարելի յե միքիչ ավելացնել, աղքատ և թույլ հողերում՝ սպականեցնել։

Ցանել բացառապես ուղիղ շարքերով, վոչ մի զեղքառում թույլ շտալ ծուռ ու մուռ և ձեվավոր ցանք։ Այն զեղքերում, յերբ ձիլերը յերկար ժամանակ չեն յերեվում, անմիջապես արեալ և ստուգել զրա պատճառները և հարկ յեղած զեղքառում կատարել կրկնացանք։ Նման զեղքերում բարոր աշխատանքները վերջացնել մինչև մայիսի 20-ը։

Սապուլվար կատարած արտերում քեշի ժամանակ անպայման կատարել փոցիում կամ տափանում։ Արաթած արտերը չեցինել այն զեղքերում, յերբ անմքենների պատճառով հողը կեղեակալում է։ Ցանկալի յե այս փոցինը կատարել կենդանի քարշող ուժով։

Վերինական նոորացումից հետո անհրաժեշտ մեկ բնում թողնել 2 բույս և բույսը-բույսից 20-25 սմ։ Հեռավորության վրա։ Առաջին նոորացումը սկսել այն ժամանակ, յերբ յերեվացել են մեկ յերկու իսկական տերելիներ և 2-րդը՝ յերբ յերեվացել են և իսկական տերելիներ։

Ցանքի ընդհանուր դրությունը կարող է վորոշ չափով բնորոշվել բամբակի զարդացման ընթացքով։ վաղ ցանած բամբակը և կղզում լընում և ավելի յերկար, քան թե ուշ արած ցանքերի բամբակը։ սակայն հետազայում դրությունը փոխվում է։ Ինչպես վաղ, նույնպես և ժամանակին արած ցանքի զեղքում բամբակի ծաղկման ըրջանը համարյա թե նույնն է։ ուշ արած

ցանքերը ժամանակին արած ցանքերից 15-20 որով ուշ են ծաղկութ, իսկ վաղ ծաղկելու դեպքում բամբակը հասունանում է նույնագիտ ամենա չուտ: Եթ հերթին խոչոր նշանակություն ունի կնողուղղների հասունացման և բացվելու ժամանակը, վորովհետեւ, ուրաքան շատ ժամանակ լինի առաջին կնողուղի բացվելուց մինչև ցրտահարություն, այնքան ել շատ կնողուղներ կրացվեն մինչև ոչախտանի ըրբ:

Եթուամ են զեղքեր, յերբ շատ կնողուղներ են բացվում վոյ թե ժամանակին արած ցանքի ու կանոնավոր կատարված խնամքի հետևուագի, այլ միջատների կամ հիմանդրությունների սրբառաւած զնուաներից: Պարզ և, վոր նման ձեզով բացված կնողուղների բամբակը լինում և վատ վորակի և սուացված բերքն ել քիչ-ույս ձեր կնողուղներին անվանում են «քոռազողաք»:

Սաորի բերդած տախտակը ցույց և տալիս ցանքի ժամանակի և կնողուղների բացվելու ժամանակի միջև յեղած կապը:

Աղյուսակ № 7

Խ №	Ցանքի ժամանակը	Կնողուղների բացվելու ժամանակը
1	10 ապրիլ	4 սեպտեմբեր
2	20 >	29 սպտուս
3	20 >	29 >
4	10 մայիս	26 սեպտեմբեր
5	20 >	22 >
6	30 >	27 >

Այս թվերից զգալու չետևնել, վոր մեծ տարբերություն չկազմական և ժամանակին կատարված ցանքերի միջև: Դրան հակառակ, ուշ ցանքերի կնողուղները մոտ 25-30 որով ուշ են բացվում համեմատած վաղ և ժամանակին կատարված ցանքերի հետ. այսպիսով, ուշ ցանքերի համար քիչ ժամանակի և մնում առաջին կնողուղի բացումից մինչև չշախտանք, հետևազես նման գեղքում քիչ ել կնողուղներ կրացվեն մինչև ցրտանը:

Ժամանակին արված ցանքերում կնողուղները բացվում են ավելի շուտ և մինչև ցրտահարությունը մնում ե գեռ յերկար ժամանակ: Ցանքի ժամանակը մեծ նշանակություն ունի նաև բերքի քանակի տեսակետից: Հայտնի յե, վոր ուշ արած ցանքերից մեծ

բերք չի ստացվում. դրա պատճառահերթ հետ մենք արգեն ծանութացանք:

Թերապնահատել ցանքի ժամանակի նշանակությունը, նշանակում և հրաժարվել նորմալ բերքից: Առարկ վերջուն թվերը ցույց են տալիս դրա ճշտությունը:

Աղյուսակ № 8

Տ/Տ	Վարակդ	Տանքի ժամանակը	Թվերը Ի հետարից կիրաներով
1	Տաշքենդ և Նրա բրդանակում . . .	20—30 ապրիլ	983
		10 մայիս	745
		20 *	628
		30 *	410
2	Բուխարայում (Զերավրան գետի հոգառում) . . .	30 ապրիլ	1147
		10 մայիս	942
		20 *	734
		30 *	493

Այս թվերը ցույց են տալիս, վար մայիսի առաջին կեսից հետո արգած ցանքերը տալիս են 15—20%-ով բերքի անկում՝ համեմատած ժամանակին կատարված ցանքերի հետ. դրա զվարացոր պատճենը, ինչպես արգեն առվել է, այն է, վար առաջին կենդուղի բացվելոց մինչև աշնան ցրակերը քիչ ժամանակ է մնում:

Այս շանօթի զեղողում ցրացի կենդուղների ուշ բացվելուց, նրանց թիվին և՛ մեկ թվի վրա պահանջ է լինում, վորեն իր հերթին նշագրեցնում է բերքը: Կատարված վորեները ցույց են տալիս հետեւյլը:

Աղյուսակ № 9

Տ/Տ	Վ. ա. յ. թ. թ.	Տանքի ժամանակը				
		Ապրիլ Մինչ	10/V	20/V	30/V	9/VI
1	Տաշքենդ	21	19	17	14	14
2	Նամանգան	26	21	20	19	18

Այս տախուակից կարելի յէ դալ հետեւյալ յեղբակացություններին:

1. Ապրիլի 2-րդ կիսում արված ցանքը տալիս և ամենից բարձր բերք:

2. Մայիսի 10-ից մինչև 20-ը կատարված ցանքերը տալիս են մոտ 15-ից 20 %-ով պակաս բերք:

3. Մայիսի 20-ից մինչև 30-ը կատարված ցանքերը տալիս են մոտ 36—40 %-ով բերքի անկում և, զննալավես, դժունից ուշ արված ցանքերից ստացվում է բերքի անկում 60—և եւլ ամենից առաջամագ:

Առշացրած ցանքը մեռնուու չե ինչպէս բերքի, նույնպէս և ստացված բամբակի վորակի անկման տեսակետից: Ցրտահարությունից առաջ ստացված բամբակը լինում է սպիտակ, մաքուր, ամառ, դանուուր, ելաստիկ, խոկ ցրտահարությունից հետո ստացված բամբակը մեծ մասամբ լինում է դեղին և կեղտառ, վորովհետու հավաքելու ժամանակ ցրտահարված և չորացած ծաղիկներն ու աներենները կազմում են հնդաղորին, թերը նույնպէս լինում է թույլ և մեռած: Ծերեւ ժամանակին կատարված ցանքերից բերքի 60—80 %-ը հավաքվում է նախքան աշնան ցրտերը, աստ ուշ կատարված ցանքերի բերքը նախքան ցրտահարությունը կազմում և ընդհանուր բերքի 20—30 %-ը:

Առածից պարզ է, վոր ուշ ցանք կատարելու հետևանքով մեր ժողովրդական տնտեսությունն ունենում է մեծ կորուսներ ինչպէս բերքի, նույնպէս և թերը վորակի անկման հետևանքով:

Բացի այս բոլորից, ցանքի ժամանակին ազդում է նաև թերի յելանքի վրա: Ժամանակին արված ցանքերից ստացված բամբակի յելանքն ավելի բարձր է, քան թե ուշ ցանքերինը:

Տաշքենդի անլեկցիոն կայանը տալիս և հետեւյալ թվերը ցանքի ժամանակի և թերը յելանքի միջև յեղած կապի մասին:

Աղյուսակ № 10

Հ. Տ.	Ցանքի ժամանակը	Թերը յելանքը
1	24 ապրիլ . . .	34,1%
2	30 ։ . . .	33,7 ։
3	10 մայիս . . .	33,1 ։
4	20 ։ . . .	32,5 ։
5	30 ։ . . .	32,2 ։
6	9 հունիս . . .	31,1 ։

Յելնելով մինչ այժմ բերած բոլոր թվական ազգայիներից ցանքի ժամանակի վերաբերյալ, կարելի յէ հանգել հետեւյալ կարևոր յեղափակացություններին:

1. Բամբակից մեծ բերք ստանալու համար անհրաժեշտ է հոգը վարել և նախազգարանամել աշխանից:

2. Ցանքը կատարել դարձնան կամ ձմռան արութից հետո (պլաստորագես դարձնան):

3. Ցանքը սկսել մոլախոռների ծիրելը վոչչացնելուց հետո:

4. Ցանել մաքուր, զատօն և տառզ սերմեր:

5. Ցանքը ողիոր անել վոչ շատ շատ և վոչ ել շատ ուշ: Մեջ մաս ցանքը ողիոր սկսել տաղրիլի 20-ին և վերջացնել մայիսի 30-ին:

4. ՑԱՆՔՍԱՀՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԽՆԴՐՈՒՄ

Մինչև այժմ շատերը ցանքսահրձանառությունը զիտել են վորովես ցանիող բույսերի հասարակ հաջորդականություններ: Ցանքաշը հանդաւաշը աշխատավոր բարեկանացումը պարզաբանելու մեջ է:

Սոցիալիստական զյուղատնակառության պայմաններում ցանքսահրձանառությունը զատառավարության կարևոր խնդիրներից մեկը է: Նրա հետ կապված և բազմապիսի տէրուտեխնիկական ձևոնարկումների իրականացումը, վորոնց վերջնական նպատակները կմնապործել պետության պլանային առաջադրանքները բերքատվության բարձրացման, ինքնարժենքի իջնցման և աշխատանքի բարձրացման, արտադրության բնականացման համար:

Ցանքսահրձանառությունը և նրա հետ կապված աղբուոնինիկական ձևոնարկումները միաժամանակ սովորվներում և կոլխոզներում ողիոր կարևոր լծակ հանդիսանան նրանց կազմակերպչական-անհանուսական ամրապնդման համար:

Այնոն անգամ ցանքսահրձանառություն կիրառելիս ողիոր յեւնել պետական առաջադրանքներից: Պետական առաջազդության մեջ որոշված են բույսերի (կուլտուրաների) տոկոսային հարաբերությունները նրանց բերքատվության չափը, աշխատանքի արտադրութականությունը: Ագրոտեխնիկայի, խիմիզացիայի, մեխանիզացիայի զարգացման ներկա պայմաններում ցանքսահրձանառությունը հանդիսանում է դյուրատնտեսության մեջ պրոցեսները կազմակերպող կարևոր մոմենտ: Առանց ցանքսահրձանառության մեջ չենք կարող ճիշտ կազմակերպել աշխա-

տանքը, լրիվ ուղաղործել քարչող ուժը, դործիքներն ու մեջենուները և բարձրացնել բերքատվությունը։ Ընկ։ Յակովիկը գուսնում եւ, զոր ՇԱՀՐՈՊԵԽՆԻԿԱՆ՝ դա ցանցաշրջանառություն եւ։

Ցանցաշրջանառության բացակայությունը հացահատիկային և այլ անտեսություններում պատճառ և դառնում դաշտերի մոլախոսերով վարակվելուն, վորը, ինչտես առվեց, առաջ և բերում բերքի անկում։ 1931 թվին Կոլխոզային Խնամիտութիւն կողմից կաղամակերպված եքսակնդիցիան ցույց և տվել, զոր բազմաթիվ սովորդներում ու կոլխոզներում մոլախոսերի ուժեղ զարգացման հետևանքով, մենք ունեցել ենք մեծ կորուստներ։

Ազգասեխնիկայի և տեխնիկայի զարգացման ներկայ ետապում՝ կուլտուրական բույսերի խոշոր մասի համար մոնոկուլառութան վատանգավոր ե։ Այդ բոլորից յնընելով տատշնատար կուլտուրայի հետ միասին պետք է կանոնավոր և նախորոք վորոշված հաջորդականությամբ մշակվեն նաև ուրիշ կուլտուրաներ։

Պարզ ե, զոր բույսերի հաջորդականության վերաբերող նկատառումները քարցած, անփոփոխ մոմենտներ չեն։ Արտադրական ուժերի վոխովելու, աղբոնոմիայի, քիմիայի, տեխնիկայի նվաճումների հետ միասին պիտի փոխովի նաև մեր մոտեցումը, մեր պահանջը ցանցաշրջանառության նկատմամբ։ Մենք խոշոր քայլեր ենք անում հողային և կլիմայական պայմանների առանձնահատկությունների տիրապեսման և այդ նվաճումների հաջող կիրառման բնուգավառներում, ուստի պիտի կարենալ բարձր բերք ստանալու համար ուղարկործել զարգացման տվյալ ետապին մատչելի բոլոր աղբոնութիւնիկական ձևոնարկումները։ Այսպիսով, դարձացման ներկա ետապում ցանցաշրջանառությունը դասնում և բերքի բարձրացման խնդրում հիմնական միջոցառումներից մեկը։ Մասնակիութածած տնտեսություններում նա պիտի լինի ճկուն և հարմարման լինի հետազա մասնավիտացումը խորացնելու համար, նա իրենից պիտի ներկայացնի վոչ թե միայն բույսերի կանոնավոր հաջորդականությունը, այլ նաև պիտի ընդունելի աղբոնութիւնիկական միջոցառումների վողջ կոմպլեկտ և բոլոր հնարավորությունները ստեղծի աշխատաղ ձեռքբերի և քաշող ուժի կաղամականությամ և լրիվ ողտագործման համար։

Տ. ՅԱՆՔԱԾՐՁԱՎԱՌԱՌՈՒԹՅԱՆ ԱԴՐՈՏԵԽԵՆԻԿԱԿԱՆ ՆՇԱՆԿՈՒ-
ԹՑՈՒՆԲ

Հայտնի յեւ, վոր յեթե հողը ազգում և բռւյսի զարգացման
վրա, առա բռւյսն Ել իր հերթին ազգեցությունն և թողնում հա-
ղի վրա: Ահա այդ փոխադրեցություններն առեղծում են մի շարք
քիմիական, Փիզիկական և բիոլոգիական բնույթի հետեւթյուն-
ներ, վորոնցից զիմապորները հետեւթիւններն են:

1. Յուրաքանչյար բռւյս հողից վերցնում և վորոշ քանակու-
թյամբ մանգանյութեր: Տարրեր բռւյսեր տարրեր քանակությամբ
և տարրեր հարարերությամբ Ել սննդանյութեր են վերցնում:
Պալարագառուղները և արմատապառուղները հողից վերցում են տա-
վավի կալիում, հացարույսերը՝ քիչ: Թիթեանածաղիկ բռւյսերը
հողը նույնինիւ հարստացնում են աղոտով և ստեղծում են նազա-
տավոր պայմաններ իրենցից հետամշակող բռւյսերի համար:

2. Տարրեր բռւյսեր իրենց սննդղը կարողանում են վերցնել
հողի տարրեր խորություններից: Այդ հանդամանցը կախված է
նրանց արմատային ուստահմի հզորությունից և դարձացման թա-
փից: Ընդեկնենների արմատները զնում են ավելի խոր, ուղաղոր-
ծում են հողի խոր շերտերում զանվոր սննդանյութերը և ջուրը,
իսկ հացահատիկները, ընդհակառակը, ողտազործում են, պլիս-
վորապես, հողի վերին շերտերը:

3. Տարրեր բռւյսեր տարրեր հատկությունն ունեն յուրացնե-
լու հողում դանվող լուծված և դժվարալուծ աղերը, որինակ,
շաքարի ճակնդեղն ավելի հեշտ է կարողանում յուրացնել կալիու-
մը դժվարալուծ միություններից, քան թե հացահատիկները:

4. Բռւյսերն ունեն տարրեր պահանջ նաև հողում յեղած շրի
նկատմամբ:

5. Բռւյսերի ազգեցությունը հողի Փիզիկական հատկություն-
ների վրա նույնպես տարրեր են: Տարքահերկ բռւյսերն իրենցից
հետո հողը թողնում են ավելի փուլիր վիճակում, քան թե հացա-
հատիկները, բայց դրա հետ միասին նաև փոշիացնում են հողը:
Պարզ ե, վոր այս բոլոր առանձնահատկությունները ցանքաւ-
շը անառություն կազմելիս պիտի հաշվի հաշվի առնել: Բռւյսերի հա-
յորդականությունը կատարել այնպես և այն հաշվով, վորպեսզի
նախորդ բռւյսերը միադիմայն նպատակավոր պայմաններ ստեղ-
ծեն հետորդ բռւյսերի զարգացման համար:

6. Շատ կարեւոր և նաև հաշվի առնել բույսերի բիոլոգիական Հասկանիշները : Կան մի շարք բույսեր, վորոնք մոլախոտերի դեմ պայքարել չեն կարող, ընդհակառակը, կան բույսեր ել, վորոնք շատ հաջող կարողանում են ճնշել մոլախոտերին : Բացի դա, մի շարք մոլախոտեր, հիմանդրություններ, և միջատներ հարմար ված են վորոշ բույսերի, կամ, ինչպես ասվում է, մասնագիտացած են վորոշ բույսերի :

Այս հանդամանքը խոշոր գեր և կատարում մոլախոտերի, հիմանդրությունների և միջատների տարածման և բազմացման խնդրում : Պարզ ե, վոր այս յերեսութիւնի դեմ պայքարելու ամենակարուկ միջոցը կլինի բույսերի հաջորդականությունը, կանոնավոր ցանքաշրջանառությունը, ինչպես նաև մաքուր ցելերը, հողի և ցանքերի ուշազիր խնամքը, աշնանային վարը, խողանակարը և այլն :

Այսպիսով, բույսերի տարրեր վերաբերմունքը դեպի աննդանյութերը, ջուրը, հողի ֆիշիկական դրությունը, կուլտուրական վիճակը, մոլախոտերը, հիմանդրությունները և միջատները պիտի իիստ հաշվի առնել ցանքաշրջանառություն կազմելիս :

Մինչև այժմ առածներից գեղար չի հասկանալ, վոր քանի վոր տարրեր շրջանների կլիմայական և հողային պայմանները միատեսակ չեն, քանի վոր տարրեր տեղերում ջրային, աննդառության ռեժիմները հողում տարրեր են, մոլախոտերն ես միատեսակ չեն, առաջ շարլոն, ստանդարտ ցանքաշրջանառություն առաջարկել բոլոր շրջանների և սովորող կոլլսովների համար՝ չի կարելի : Աղահովելով առաջնառությունը կուլտուրայի բարձր բերքատվությունը, հաշվի առնելով բոլոր թված մամենական բարձր բարձրական կազմելու յե իր շրջանի և կոլխոզների համար հատուկ ցանքաշրջանառություններ, հիմք ընդունելով Հողժողկոմատի կողմից ուղարկած ցանքաշրջանառության սինմաները և համաձայնեցնելով այն հանդապետական ցանքաշրջանառության բյուրոյի հետ :

Ցանքաշրջանառության կազմակերպչական անտեսական հիմքների մասին չենք խոսում, վորովհետեւ այդ մասին դրվում են մի այլ աշխատանք :

Վերջում անհրաժեշտ ենք համարում տալ Հողժողկոմատի կողմից մշակված հրահանդերը ցանքաշրջանառության մասին, ինչպես նաև ցանքաշրջանառությունների մի քանի տարրեր տեղերը :

Հ Ր Ա Յ Ա Ն Գ

ԿՈՒԽՈՉՆԵՐՈՒՄ ՑԱՆՔՍԱՀՐՁԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ը Ն Դ Ա Ն Ա Ի Բ Դ Ր Ո Ւ Ց Բ Թ Ն Ե Ր

1. Ցանքսաշրջանառությունը պետք է ապահովի պետական
և ժողանակառության պլանային ուսումնագրականքները:

2. Ցանքսաշրջանառությունը պետք է ապահովի առաջատար
կուլտուրայի բարձր տեսակարար կշիռը:

3. Կիրառելով աղբառենինիկական միջոցառությունների լրիվ կամ-
պէսկու ստանալ մաքսիմում բերք, նամանավանդ առաջատար
կուլտուրայի վերաբերյալ:

4. Ցանքսաշրջանառությունը պետք է ապահովի ցանցելիք
կուլտուրաների այնպիսի հերթականություն, վորը գրավական
լինի մոլախոռերի դեմ պայքարի և հողի ստրուկտուրայի լավաց-
ման:

5. Ցանքսաշրջանառությունը պետք է ունենա մինիմալ քա-
նակությամբ դաշտեր, միայն այն հաշվով, վոր նա բավարարի
վերեւում հիշված բոլոր պահանջները:

6. Ցանքսաշրջանառությունը պետք է ապահովի դյուզատըն-
տեսական աշխատանքների, քարչող ուժի, մեքենաների և դյու-
զատնենական դործիքների սացիոնալ, համաչափ դաստիճարություն
ամրող ստարված ընթացքում:

7. Միջկոլխողային և միջդյուզական ցանքսաշրջանառություն
ստանալ չի թույլատրվում:

8. Ցանքսաշրջանառության անցնելիս չթերազնահատել հա-
յահատիկային կուլտուրաները և վոչ մի գեղզում չպակասեցնել
հացահատիկային կուլտուրաների տարածությունները:

9. Ցանքսաշրջանառությունը պետք է ապահովի կոլյացի
և կոլյոզինիկների անասունները կոսղիտ, հյութալի և հնարավորին
չափ ուժեղ կերով:

2. ՑԱՆՔՍԱԾՐՁԱՌԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ

1. Հանրապետական ցանքաւշը լանառության բյուրոյի կողմէից լրջանին առաջարկված ցանքաւշը լանառության վարիանտները յենթարկվում են ազգարարագրական խորհրդակցության քննության և այդ վարիանտները համակերպելով լրջանի առաջարարական քննության և պայմաններին և պայմաններին, դնում են կոլխոզի արտադրական խորհրդակցությանը :

2. Երջանի կողմից առաջարկված տիպիկ սխեմաներից կոչվածը ընտրում ե իր համար ամենանորագույնակահարմար սխեման, յենիւլով իր կոնկրետ պայմաններից, նախագծած և պլանային առաջարարակից ըստ կուլտուրաների :

3. Երջանի և կոլխոզի մեջ տեղի ունեցած վեճը ցանքաւշը նառաւթյան վերաբերյալ լուծում և հանրապետական, ցանքաւշը նառաւթյան բյուրոն :

4. Ցեմերացաւիկ դեղքերում ցանքաւշը անցնելիս անձնելիս անհամար էլեմենտ և լինում տարածությունների վորոշ փոփոխում համեմատած կոլխոզին տված պղանային առաջարանքին, այս փոփոխությունը թույլատրվում և հողագոյնի համաձայնությամբ միայն այն դեպում, յեթե մի կոլխոզում պահանջեցրած տարածությունը կնաքնի լինածնի շրջանի այլ կոլխոզի տարածության համապատասխան լանցառումով, վերջին հաշվով աղահովելով լրջանի պղանային առաջարանքներին ընդհանրապես և դարձնանացանի պլանը մասնավորապես :

5. Ցանքաւշը անառության մեջ կերի ռեսուրսները պետք է հաշվել, յենիւլով անառունների աճումից, նրանց կերակրման լավացումից : Կերի բարանու հաշվելիս, պետք է հաշվի տռնել, թե՛ կոլխոզի և թե՛ առանձին կոլխոզնիկի անառունները : Հատուկ ռւագրություն պետք է դարձնել արոտանեղերով աղահովելու հարցի վրա :

6. Ազրոտեխնիկական անսակետից, ցանքաւշը անառությունը պետք է բավարարի հետեւալ պահանջները .

ա) կուլտուրաների ճիշտ հերթականություն, աղահովելով հիմնական առաջատար կուլտուրայի համար ամենալավ տեղը,

բ) աղահովել մոլախոտերի դեմ պայքարը .

գ) ցանքաւշը անառության դաշտերի վրա պարարանյութերը պետք է դառնալու ուղիղությալ կերպով՝ ստեղծելով նպաստավոր պայմաններ բերքատվության բարձրացման համար :

ՅԱՆՔՍԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԾՈՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Կոլլատիք դաշտերի բաժանումը պետք է վերջացնել 15 որ տակածից տառաջ :

2. Ցանքաւաշրջանառության համար դաշտերի բաժանումը պետք է կատարել այնպես, վոր (Հնարավորության սահմաններում) հոգակառներն ունենան հարմար և կարճ ճանապարհ դեպի տնօտեղիք կամ հիմնական հումուզիքի հանձնման իրար : Այդ դաշտերի հոգակառները բաժանելիք, անհատիկաց և հաշվի տանել ճանապարհերի ցանցը, բնական սահմանները և արդ հոգակառները հարմարեցնել արականը ուսցինալ ուղարկութամանը :

3. Վորոյն որենք՝ ցանքաւաշրջանառության հոգակառները պետք է իրար հոգակառը լինեն, տառածումը լուրջ տրվում է 5—10 0/0 : Հնարավորության սահմաններում հատկացնել ամեն մեկ դաշտին մեկ հոգակառը :

4. Ցեղադաշտերի համար 1933 թվին պետք է հասկացնել մոլախոտերով ամենպաշտառ վարակված հոգակառը :

5. Բաղմանյան խոտարույսեր ունեցող ցանքաւաշրջանառության անցնելու հիմնական նախապարհան պետք է ընդունել 1933 թվին անպարհան ունենալ մեկ հոգակառը դարձնանացան կամ աշնանացան հացահատիկ՝ բաղմանյան խոտարույսերի յենթացանքներով. որինակ՝ բամբակացան ըրջաններում բամբակի ուղանը կատարելուն հետ զուգընթաց պետք է կոլլատում ունենալ 12,5 % հացահատիկ բարձամյան խոտարույսերի յենթացանքնով :


6. Ցանքաւաշրջանառությունը պետք է անցկացնել կոլլատիք փաստացի տարածության վրա :

7. Ցանքաւաշրջանառությունը կիրառելիս դաշտերի բաժանումը դասավորել այն հաշվով, վոր հետազոտում մենատեսեների մուտքը կոլլատ խանդարիչ հանդամնություններ և միաժամանակ կոլլատով ցանքաւաշրջանառությունը չխախամիի :


8. Բրիգադամներն արտադրական վանդակների կցելու ընթացքում պետք է ընդունել հետևյալ սկզբանքը. ցանքաւաշրջանառության ամբողջ ժամանակաշրջանում բրիգադը ամբացված սկիտի լինի վորոշակի հոգամասերի այն հաշվով, վոր ցանքաւաշրջանառության առանձին դաշտերում յուրաքանչյուր բրիգադին հոգամաս տրամադրվի. բրիգադին տրամադրված հոգակառները պետք են լինեն իրար մատ, վորպեսդի խույս արվի անողութ աեզակոխությունից :

Հանրապետական Ցանքաւաշրջանառության բյուրո

Համար	Աշխատանքի բնույթը	Ժամկե-ները	Մանդալիսները
1	Անքառագործ	19	
2	Աշխատագործ	19—10.12	Անգարաման ժամկենաց կախած և ոգերեսությաց, ողայման:
3	Ջրերու նախազարտառապելք	10.11—1.12	
4	Համան արտիք	20.11—15.12	Անգարաման ժամկենաց կախած և ոթնույրու, ողայման:
5	Դարսարտացում	1.4—20.4	Սկզբնական ժամկենաց կախած և վարչ սկսելուց:
6	Դարսանուագործ		Դարսան արտիքի հաղերի վարույթ ողայման ավարտիչ առցիւել մերջեթիւ:
7	Դարսանանային արտիք	10.4—25.4	
8	Արտիքած հաղամաների նախառարարածում	20.4—25	
9	Աշխատագործի և վաղ դարձանագործի հրկնագործ	5.4—5.5	
10	Առվարտիան ցանցաների (վաչ արտիքի և զարմաների նախառարարածումը ցանցաների համար (փոցիւել, զիւկել, մուշախուսերի համացյակերեացանագործ)	10.4—5.5	
11	Ճանել (արտիքարարվ, ձեռավ, ձեռարավ)	20.4—10.5	Ճանել լույսանում ցանցան արարածի մայիսի ճ-իւն:
12	Ճեղացուր (ասպառուագործ)	21.4—12.5	
13	Պայքար կեղենի վեմ (ասպառու)	27.4—18.5	
14	1-ին բազհան		
15	1-ին նորորացում	18.5—7.6	
16	1-ին կուլարիվացիա		Կուլարիվացիան ընդունված է 60 տակոսուց:
17	1-ին ջուր	1.6—19.6	
18	2-րդ քաղհան	7.6—16.6	
19	2-րդ կուլարիվացիա	7.6—26.6	
20	2-րդ ջուր	16.6—4.7	
21	2-րդ քաղհան և 2-րդ նորորաց.	20.6—10.7	
22	2-րդ կուլարիվացիա		
23	1-ին բուժանում	13.7—30.7	
24	3-րդ ջուր	6.7—25.7	
25	4-րդ քաղհան	9.7—28.7	
26	4-րդ կուլարիվացիա		
27	4-րդ ջուր	24.7—11.8	
28	5-րդ կուլարիվացիա	28.7—15.8	
29	5-րդ քաղհան	12.8—27.8	
30	5-րդ ջուր		
31	Բուժից	15.8—1.9	Այնանց, վարտեղ հետըազոր և մեթե կարից կա:
32	6-րդ ջուր	1.9—7.9	
33	1-ին շանաց	20.9—15.10	
34	2-րդ շանաց	16.10—15.11	
35	3-րդ շանաց	16.11—1.12	
36	Հողաների և կնքուղիների հա-		
	գաց	17.11—5.12	
7	Ցողունների հագաց	18.6—10.12	



ԿԵԼՈՎԱՆԱԿԱՆ
ԽԱՐԱՐՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Օրակ.



FL0004420

ԳԻՆԵ 20 ԿՈՎ.

Ա 2304

2N 104.